ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
CORRUPTION PREVENTION COMMISSION

Հայաստանի Հանրապետություն, Երեւան, 0010, Կառավարական տուն 1, հեռ. (37410) 52 46 89
Republic Square, Government House 1, Yerevan, Republic of Armenia, tel. (+37410) 52 46 89

«08» 06 2020 թ.

Ե –057

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ
ՆԱԽԱԳԱՀ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան,

Ի պատասխան 2020 թվականի հունիսի 5-ի էլեկտրոնային տարբերակով info@cpcarmenia.am հասցեով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին (այսուհետ՝ հանձնաժողով) ուղղված Ձեր նամակի, ստորև ներկայացնում ենք պահանջվող հարցման վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

1. Հայտարարագրման էլեկտրոնային համակարգը, որի միջոցով ստացվում են հայտարարագրերը, ամբողջ ծավալով ավտոմատացված չէ: Այս պատճառով մինչև 2020 թվականի մայիսի 31-ը ստացված հայտարարագրերի հրապարակման ուղությամբ աշխատանքները դեռևս շարունակվում են, և դրանք հրապարակայնորեն հասանելի կլինեն 2020 թվականի հունիսի 10-ից: Հանձնաժողովն այս մասին հաղորդագրություն է տարածել, որը հասանելի է հետևյալ հղումով http://cpcarmenia.am/hy/news/item/2020/06/05/20200605/
2. Հայտարարագրերի ուսումնասիրությունը, ներառյալ հայտարարագիր չներկայացրած պաշտոնատար անձանց վերաբերյալ ուսումնասիրությունը, պահանջում է լրացուցիչ աշխատանք, և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ 5-օրյա ժամկետում այդ տեղեկությունները տրամադրել հնարավոր չէ: Առաջարկում ենք պարբերաբար հետևել Հանձնաժողովի՝ էլեկտրոնային կայքի միջոցով

տարածվող հաղորդագրություններին, իսկ հայտարարագրերի ուսումնասիրության վերաբերյալ հարցերը վերահասցեագրել հունիսի 30-ից հետո՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված 30-օրյա ժամկետում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ